

Ռեմէլէ քաղաքը և հոն փոխադրեց իր մայրաքաղաքը: Ան շինեց առաջին անգամ իր պալատը որ կոչուեցաւ Տար էս Սապպադ (նկարչաց տուն): Ասկէ վերջ Սիւլէյման շինեց խորունկ ջրհոր մը ջուր հաւաքելու համար: Սիւլէյման մզկիթի մը յատակադիրձը պատրաստեց և սկսաւ շինել զայն, անոր ամբողջանալէն առաջ՝ բորձրացաւ խալիֆայութեան:

Ուրիշ խալիֆաներ անկէ վերջ շարունակեցին շինութիւնը: Խալիֆ Օմար Իպն Ապտ էլ Ազիզ աւարտեց զայն, բայց միայն սկզբնական յատակագիրձը փոփոխելէ յետոյ, և ըսաւ. «Ռեմէլէի ժողովուրդը գոհ պիտի մնայ այս փոքրացած տարածութեամբ: Երբ Սիւլէյման՝ իր սեպհական պալատները շինեց լմնցոց՝ թոյլ տուաւ ժողովուրդին շինելու իրենց բնակարանները: Ռէմէլէի ժողովրդեան համար փոքր տուաւ Պարսսան կոչուած ջրանցքները. փոքր տուաւ նաև անուշ ջուրի հորեր:

Սիւլէյման իր քարտուղարին պաշտօն տուաւ Ռեմէլէի իր շինութեանց վրայ հսկելու, ինչպէս նաև Պատրիք Իպն էն Նաքահ (կամ էլ Պաքահ) կոչուած Լիւզացի քրիստոնեայի մը մզկիթին շինութեան հսկողի պաշտօնը յանձնեց: Սիւլէյմանէն առաջ Ռեմէլէն գոյութիւն չունէր. և տեղը բոլորովին աւազ էր (ինչպէս որ էր—Ռեմէլէ անունը ցոյց կու տայ): Տար էս Սապպադը յետոյ ժառանգութեամբ կը վիճակուէր Ապպասեան Սալիհ Իպն Ալի Ապտուլլահ Իպն էլ Ապպասի, այդ պատճառաւ ուրիշ ստացուածքներու հետ Պէնի Օմիահէն ստացաւ զայն: Պէնի Օմիահ՝ Սիւլէյմանէն յետոյ շատ դրամ ծախսեց Ռեմէլէի ջրհորներուն և ջրանցքներուն համար. և երբ Ապպասեանները տիրեցին, անոնք ալ հոն շատ գումարներ ծախսեցին, և այսպէս մէկ խալիֆայէն միւսը: Գործերը այսպէս կը շարունակուէին մինչև Միւթասսէմ—Պիլլահ խալիֆային ժամանակ. վերոյիշեալ ծախքերուն համար ան չընորհեց մշտնջենական հրովարտակ մը, որով կը շնորհէր տարեկան նուիրատուութիւն մը, բոլոր երկրագործները տարեկան տուրքի մը ենթարկելով՝ որպէս զի հաւաքուած գումարով նոյն ծախքերը վճարուին»:

985ին Մուգատտէսի կ'ըսէ. «Ռեմէլէն Պաղեստինի մայրաքաղաքն է: Ան շատ գեղեցիկ քաղաք մ'է, և լաւ շինուած. անոր ջուրը լաւ և առատ է, նմանապէս պտուղները: Շատ մը առուներու թիւններ ունի. շինուած է ան գեղեցիկ զիւղերու և մեծ